ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

---

**ք. Ջերմուկ**

**25/հոկտեմբերի/2025 թ.**

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԸ ՎԱՐՈՂԻ ՄԱՍԻՆ

Սույնով արձանագրվում է, որ Ջերմուկ համայնքի ավագանու 8-րդ նստաշրջանի՝ 2025 թվականի հոկտեմբերի 25-ին ավագանու արտահերթ՝ համայնքի նորընտիր ղեկավարի երդման արարողության նիստը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ մասին և Ջերմուկ համայնքի ավագանու Կանոնակարգի 138-րդ կետին համապատասխան կվարի ավագանու նիստին ներկա տարիքով ավագ անդամը՝ Լուսիկ Սարգսյանը:

Նիստին ներկայացած ավագանու անդամներ՝

Համբարձումյան Մխիթար Սամվելի

Սարգսյան Լուսիկ Ժորայի

Այվազյան Մխիթար Վոլոդյայի

Վարդազարյան Աննա Վասակի

Մկրտչյան Մարինե Մայիսի

Մնացականյան Արկադի Ալբերտի

Վահանյան Վարուժան Կնյազի

Գևորգյան Մանան Աղվանի

*Արձանագրող՝*

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ**
**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ**

---

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 16

25 հոկտեմբերի 2025 թվական

# ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՆԻՍՏ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու ...8... անդամներ:

Բացակա էին՝ ...Վարդան Մարգարյանը, Ջոնար Խաչատրյանը, Շիրակ Բաբայանը, Աշոտ Հովհաննիսյանը և Սյուզաննա Աբելյանը:...

**Ավագանու նիստին մասնակցում էին՝ համայնքի գյուղական բնակավայրերի վարչական ղեկավարներ** Սևակ Մկրտչյանը և Արտակ Բագրատյանը, «Ջերմուկի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Արտուշ Սիմոնյանը, «Ջերմուկ համայնքի մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ի տնօրեն Գոռ Թադևոսյանը, «Ջերմուկ համայնքի ճոպանուղի» համայնքային հիմնարկի տնօրեն Արսեն Թադևոսյանը, «Ջերմուկ համայնքի Շ. Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի տնօրեն Գոհար Մանուկյանը, «Ջերմուկ համայնքի Ռ. Մելիքյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի տնօրեն Արմեն Խուրշուդյանը:

<u>**Նիստը վարում էր ավագանու նիստին ներկա տարիքով ավագ անդամ՝**</u>

...Հովիկ Մարգարյանը...

<u>**Նիստը արձանագրում էր Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Թադևոսյանը**</u>

<u>**ԼՍԵՑԻՆ**</u>

***ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

1. Ջերմուկ համայնքի նորընտիր ղեկավարի երդման արարողության նիստը բացված հայտարարելու և երդմամբ հանդես գալու հնարավորություն ընձեռելու մասին

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

2. Համայնքի բնակիչներին տրված երդմամբ Մանան Աղվանի Գևորգյանի՝ Ջերմուկ համայնքի ղեկավարի լիզորությունների ստանձնումն ի գիտություն ընդունելու մասին

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 78-Ա/

**ԼՍԵՑԻՆ**

***ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԸ ԲԱՑՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ԵՐԴՄԱՄԲ ՀԱՆԴԵՍ ԳԱԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԸՆՁԵՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(ԶԵԿ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)***

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 74-րդ հոդվածին և Ջերմուկ համայնքի ավագանու Կանոնակարգի 58-րդ, 60-րդ, 64-րդ և 65-րդ կետերին համապատասխան՝

1. Ջերմուկ համայնքի նորընտիր ղեկավարի երդման արարողությանը նվիրված համայնքի ավագանու նիստը հայտարարել բացված:

2. Մանան Աղվանի Գևորգյանին հնարավորություն ընձեռել հանդես գալու երդմամբ՝ օրենսդրությամբ սահմանված հետևյալ տեքստով՝

*«Ստանձնելով Ջերմուկ համայնքի ղեկավարի պաշտոնը՝ երդվում եմ.*

*Համայնքի ղեկավարի լիազորություններն իրականացնելիս պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, օրենքները, համայնքի ավագանու որոշումները, ազնվորեն և բարեխղճորեն կատարել համայնքի ղեկավարի լիազորությունները, ծառայել համայնքի բարգավաճմանը, գործել ի բարօրություն նրա բնակիչների:*

*Պարտավորվում եմ պաշտպանել համայնքի իրավունքները, օրինական շահերը և սեփականությունը, ուժերիս անմնացորդ նվիրումով սատարել ժողովրդի հավատին, նպաստել նրա նյութական և հոգևոր վերելքին»:*

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

*Քվեարկության արդյունքները.*

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 79-Լ/

**ԼՍԵՑԻՆ**

***ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ԵՐԴՄԱՄԲ ՄԱՆԱՆ ԱՂՎԱՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ՝ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԼԻԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԱՆՁՆՈՒՄՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(ԶԵԿ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)***

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը՝

1. Ի գիտություն ընդունել Մանան Աղվանի Գևորգյանի կողմից Ջերմուկ համայնքի ղեկավարի լիզորությունների ստանձնումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

*Քվեարկության արդյունքները.*

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 80-Ա/

## ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| ազգանուն, անուն, հայրանուն | ստորագրություն |
|---|---|
| Սարգսյան Վարդան Ռաֆիկի | բացակա |
| Սարգսյան Լուսիկ Ժորայի | |
| Վարդազարյան Աննա Վասակի | |
| Խաչատրյան Գոհար Բաբկենի | բացակա |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | |
| Այվազյան Մխիթար Վոլոդյայի | |
| Մկրտչյան Մարինե Մայիսի | |
| Բաբայան Ժիրայր Ժորայի | բացակա |

| | |
|---|---|
| Մնացականյան Արկադի Ալբերտի | |
| Գևորգյան Մանան Աղվանի | |
| Վահանյան Վարուժան Կնյազի | |
| Հովակիմյան Ազատ Հայրիկի | |
| Ավետիսյան Սյուզաննա Թաթուլի | |

*Ջերմուկ համայնքի ավագանու անդամ,*

........Հուսիկ Սարգսյան........ ____________

*Նիստն արձանագրեց՝* Գոհար Թադևոսյանը ________